


մէջ բանտարկուեցաւ եւ անկէ արձակ-
ուելով եօթը ամիս եւս Կարին մնաց :
Եւ որովհետեւ ձմեռ ատեն ճամբորդելը
զրեթէ անկարելի ըլլալու չափ դժուար
եւ շատ վտանգաւոր է այդ կողմերը,
պէտք է խորհիլ որ Մայիսէն առաջ կա-
թողիկոսը Կարին հասած չի կրնար ըլլալ
ուր կը դանուէր 1678ի Սեպտեմբեր
28ին : Ես աւելի հաւանական կը դանեմ
որ ան հազիւ Յունիսին Կարին հասաւ

եւ առկէ ութը ամիս վերջ միայն կրցաւ
Կարինէն մեկնիլ Երզնկայի վրայով Տիգ-
րանակերտ, այսինքն 1679ին, եւ այս
ատեն զէպի Տիգրանակերտ ճամբուն
վրայ, Երզնկայէն անցնելով, Յուն-
ուարի 9ին արդէն Ակն կը հասնէր եւ
Հոկտեմբերին ալ (1679) Կ. Պոլիս :

Յակոբ Զուղայեցիի երկրորդ ինք-
նագիր նամակը, նոյն դիւանէն, հոս
կը ներկայացնեմ լուսատիպ եւ արտա-



Ինքնագիր նամակ Յակոբ Գ. Զուղայեցի Կաթողիկոսի :
Դիւան Հաւատոյ Տարածման Ժողովի Ի Հոռով
CONGR. ARM. vol. III F. 237R.